ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Անի Ազատյանը, Վարդան Խաչատրյանը, Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Գարիկ Համբարձումյանը, Արտավազդ Մարգարյանը, Արտյոմ Պետրոսյանը, Արմինե Սարգսյանը, Նարինե Ստեփանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Հրայր Հակոբջանյան, Սուրեն Մկրտչյան, Վարդան Հակոբյան, Հրաչյա Հովհաննիսյան, Լյովա Ավետյան, Խորեն Ուստյան, Ատոմ Ատոմյան, Միեր Գևորգյան, Գոհար Հովսեփյան, Կարեն Պողոսյան, Մերի Մելիքյան, Արգամ Հովակիմյան, Արարատ Գոլեցյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գոռ Նազարյանը

Լսեցին
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 11-ի արտահերթ նիստի **օրակարգը՝**

1.1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 292-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼԻ ՓՈՂՈՑԻ 104 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Կ.ՊՈՂՈՍՅԱՆ/

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 292-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Արտաշատ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 292-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Եկամուտների գծով 10648208,927 հազար դրամ, այդ թվում՝

1.1)Վարչական մաս
ա.սեփական եկամուտներ՝ 1809829,4 հազար դրամ
բ.պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 3256027,0 հազար դրամ
գ.այլ ընթացիկ դրամաշնորհներ՝ 5882,9
հազար դրամ դ.պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների ն պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման

համար պետական բյուջեից ստացվող միջոցներ՝ 5997,0 հազար դրամ
1.2)Ֆոնդային մաս
ա.վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 120089,853.2 հազար դրամ
բ.ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 21048,774.2 հազար դրամ
գ.հողի օտարումից մուտքեր՝ 2355334,0 հազար դրամ
դ.այլ գույքի օտարումից մուտքեր՝1294000,0 հազար դրամ
ե.պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 1780000,0 հազար դրամ
զ.վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե՝ 995000,0 հազար դրամ

2. Ծախսերի գծով՝ 10648208,927 հազար դրամ:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2023 թվականի բյուջեի եկամուտները համաձայն հավելված 1-ի:

3.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման համաձայն հավելված 2-ի և ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 3-ի:

4.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2023 թվականի բյուջեի տարեվերջի միջոցների հավելուրդը կամ դեֆիցիտը համաձայն հավելված 4-ի և համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները համաձայն հավելված 5-ի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2-Ն/

Լսեցին
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕՐԲԵԼԻ ՓՈՂՈՑԻ 104 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 205-րդ հոդվածով և հիմք ընդունելով

Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի 09.01.2023 թվականի Ֆ/1 001 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող, Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օրբելի փողոց 104 հասցեում գտնվող 1,7 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասն անհատույց օգտագործման իրավունքով՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիային՝ ֆուտբոլի դպրոց կառուցելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարականը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ԱՇԻԿՅԱՆ

ՀԵՐՄՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԴԵՐՄՈՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՈՌ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՈՍԿԱՆՅԱՆ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գոռ Նազարյանը _____